Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

02 նոյեմբերի 2023 թվական | ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-02/23» ծածկագրով գնման ընթացակարգը և ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կարիքների համար «Փրփրային հրդեհաշիջման համակարգի (ՀՊՊՏ) բաքերի և երկաթբետոնե ռեզերվուարների ներքին մակերևույթների մաքրում և հակակոռոզիոն շերտապատում» աշխատանքների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-02/23» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ից 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ն և 2023 թվականի մարտի 2-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-02/23-02/03 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) սահմանված աշխատանքի կատարման ժամկետները (աշխատանքները պետք է կատարվեն 2023 թվականի հուլիս - օգոստոս ամիսներին), որի հետ կապված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**